ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«15» հոկտեմբերի 2018 թվականի N 149-Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 143-Ն հրամանի 24-րդ և 30-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի բաժնի 2018 թվականի տարեկան ծրագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի բաժնի պետ Կարեն Թորոսյանին և գլխավոր մասնագետ Վահան Մարգարյանին, 2018 թվականի նոյեմբերի 20-ից սկսած՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ենթակայության տակ գտնվող «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ-ի 2017 թվականի ապրիլի 1-ից մինչև 2018 թվականի նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածի գնումների համապատասխանության և 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական աուդիտ:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

11/15/2018

X

VERIFIED OCSP 15-Nov-18 09:26:28 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118